


# ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ



## ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ



*Մարզկենտրոնը՝ ք. Հրազդան*  
*Տարածաշրջանները՝ Հրազդան, Կոտայք, Նաիրի*  
*Քաղաքները՝ Հրազդան, Աբովյան, Չարենցավան,*  
*Բյուրեղավան, Ծաղկաձոր, Եղվարդ, Նոր Հաճրն*

**ՀՀ Կոտայքի մարզը** գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնում: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ ՀՀ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

Տարածքը	2089 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7 %
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	60
Քաղաքներ	7
Գյուղեր	62
Բնակչության թվաքանակը 2007թ. հունվարի 1-ի դրությամբ	276.2 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	155.1 հազ. մարդ
գյուղական	121.1 հազ. մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	56.2 %
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2006թ.	8.6 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2006թ. հուլիսի 1-ի դրությամբ)	162100 հա
այդ թվում՝ վարելահողեր	37800 հա

**ՀՀ Կոտայքի մարզի** տարածքով են հոսում Հրազդան և Ագատ գետերը: **Հրազդան գետը** (նախկին անվանումը՝ Չանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կան 340 վտակներ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը:

**Ագատ գետը** նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

**Մարզը** հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջնի» և «Արզնի» հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, **Հատիս** և **Արայի** լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2528 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ: **Արայի լեռը** (բարձրությունը՝ 2577մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

**Մարզի** հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1200 – 1300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1700 – 1800 մ բարձրության վրա):

**Մարզի** տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան-Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան-Իջևան երկաթգիծը:

2006թ.-ին **մարզի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 10.1 %,
- գյուղատնտեսություն՝ 9.0 %,
- շինարարություն՝ 2.8 %,
- առևտուր և ծառայություններ՝ 5.1 %:

ՀՀ **Կոտայքի մարզը** համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է: **Մարզի տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռողն **արդյունաբերությունն** է: Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություններ:

**Մարզի արդյունաբերության** մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն ( պողպատի և թուջի ձուլում),

դ) կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն (ոսկերչական իրերի և կից ապրանքների (ադամանդի) արտադրություն):

**Մարզի գյուղատնտեսությունը** մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

**Բեռնատրևորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով:

**ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	Քանակը		
	2004	2005	2006
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1246	1235	1253
<i>այդ թվում՝</i>			
խանութներ	311	320	353
կրպակներ	897	880	844
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	4	4	4
սպառողական ապրանքների շուկաներ	10	7	7
առևտրի այլ օբյեկտներ	24	24	45

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	Քանակը		
	2004	2005	2006
Հաստատություններ, ընդամենը	188	187	190
<i>որոնցից՝</i>			
նախադպրոցական պետական	52	50	50
հանրակրթական պետական դպրոցներ	106	107	108
ոչ պետական հանրակրթական դպրոցներ	2	2	3
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	21	20	20
պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6
ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	2	3

**Հրազդան քաղաքի** (2006թ. տարեվերջին՝ 52.8 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է հանրապետությունում: **Քաղաքի արդյունաբերության** մյուս ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն):

**Չարենցավան քաղաքը** (2006թ. տարեվերջին՝ 24.7 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 38 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: 1953թ. ՀԷԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ և Չարենցավանը դարձավ հանրապետության կարևորագույն արդյունաբերական կենտրոններից մեկը:

**Քաղաքի արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

**Ծաղկաձոր քաղաքի** (2006թ. տարեվերջին՝ 1.6 հազ. բնակիչ) կլիման մեղմ է և առողջարար: Առողջարանային քաղաք է:

**Արովյան քաղաքը** (2006թ. տարեվերջին՝ 45.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 16 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, **արդյունաբերական** խոշոր կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը *մշակող արդյունաբերությունն* է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում գարեջրի արտադրությունը:

*Բյուրեղավան* քաղաքի (2006թ. տարեվերջին՝ 8.3 հազ. բնակիչ) *արդյունաբերության* հիմնական ուղղությունը *մշակող արդյունաբերությունն* է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ապակե տարայի, ճենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

*Եղվարդ քաղաքը* (2006թ. տարեվերջին՝ 12.1 հազ. բնակիչ) գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է:

Քաղաքի *արդյունաբերության* հիմնական ուղղությունը *մշակող արդյունաբերությունն* է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (թորած ալկոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի, ալյուրի արտադրությունը, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունը):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև *գյուղատնտեսությունը*, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է:

*Նոր-Հաճրն* քաղաքի (2006թ. տարեվերջին՝ 10.2 հազ. բնակիչ) *արդյունաբերության* հիմնական ուղղությունը *մշակող արդյունաբերությունն* է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրությունը (ոսկերչական արտադրատեսակների (ադամանդի) արտադրությունը):

#### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
Հրազդան	ք. Հրազդան
Արովյան	ք. Արովյան
Բյուրեղավան	ք. Բյուրեղավան
Եղվարդ	ք. Եղվարդ
Ծաղկաձոր	ք. Ծաղկաձոր
Նոր Հաճրն	ք. Նոր Հաճրն
Չարենցավան	ք. Չարենցավան

#### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1 Ալավարս	
2 Ակունք	
3 Աղավնաձոր	
4 Առինջ	
5 Արագյուղ	
6 Արամուս	
7 Արգել	
8 Արգական	
9 Արգնի	
10 Արտավազ	
	<ul style="list-style-type: none"> <li>• Արտավազ</li> <li>• Փյունիկ</li> </ul>
11 Բայաշոփա	

Համայնքի անվանումը		Բնակավայրի անվանումը
12	Բջնի	
13	Բուժական	
14	Գառնի	
15	Գեղաղիբ	
16	Գեղաշեն	
17	Գեղարդ	
18	Գետամեջ	
19	Գետարգել (նախկինում՝ Ռ-աղիոկայանին կից)	
20	Գողթ	
21	Զառ	
22	Զովաշեն	
23	Զովունի	
24	Զովք	
25	Զորական	
26	Թեղենիք	
27	Լեռնանիստ	
28	Կաթնաղբյուր	
29	Կամարիս	
30	Կապուտան	
31	Կարենիս	
32	Կոտայք	
33	Հանքավան	
34	Հատիս	
35	Հացավան	
36	Չորաղբյուր	
37	Մայակովսկի	
38	Մարմարիկ	
39	Մեղրաձոր	
		• Մեղրաձոր
		• Գոռգոչ (Կորչյու)
40	Մրգաշեն	
41	Նոր Արտամետ	
42	Նոր Գեղի	
43	Նոր գյուղ	
44	Նոր Երզնկա	
45	Նուռնուս	
46	Ողջաբերդ	
47	Պոռշյան	
48	Պտղնի	
49	Ջրաբեր	
50	Ջրառատ	
51	Ջրվեժ	
52	Մարայանջ	
53	Մոլակ	
54	Սևաբերդ	
55	Վերին Պտղնի	
56	Քաղսի	
57	Քանաքեռավան	
58	Քասախ	
59	Քարաշամբ	
60	Ֆանտան	

